Հավելված N 2
2025 թվականի հունվարի 16-ին կնքված
«ԴՏՊ-1141-11018/25 ԳՈՒՍ19»

# *Դրամաշնորհային հաշվետվություն N_1_*

## *1. Ընդհանուր տեղեկատվություն*

| | |
|---|---|
| ***Ծրագրի անվանում*** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Սյունիքի մարզում» |
| ***Դրամաշնորհի N*** | «ԴՏՊ-1141-11018/25 ԳՈՒՍ19» |
| ***Դրամաշնորհատու կազմակերպություն*** | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| ***Դրամաշնորհառու կազմակերպություն*** | Գործընկերություն և ուսուցում ՀԿ |
| ***Ծրագրի իրականացման ժամանակահատված*** | 01 Հունվար 2025թ. - 31 Դեկտեմբեր 2025թ. |
| ***Հաշվետու ժամանակահատված*** | Հունվար-մարտ. 2025 |
| ***Ներկայացման օր*** | 04.04.2025 |
| ***Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)*** | Արտաշես Տոռոզյան, ԳՈՒՄ ՀԿ, ծրագրի ղեկավար |

***2. Բովանդակային հաշվետվություն***

***2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:***

Սույն հաշվետվությունն ամփոփում է մ/թ. հունվար – մարտ ժամանակահատվածում ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները՝ ըստ ծրագրով սահմանված գործողությունների պլանի:

***Գործողություն 1. Ծրագրի մեկնարկ, շահագրգիռ կողմերի քարտեզագրում, աշխատանքային հանդիպումների իրականացում***

Ծրագրի մեկնարկային փուլում ծրագրի աշխատանքային թիմը՝ ծրագրի համակարգողի և սոցիալական աշխատողների ակտիվ ներգրավվածությամբ, կապ է հաստատել տարածաշրջանի բոլոր շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ համագործակցության ձևավորման նպատակով: Կատարվել է մարզում և Տեղ համայնքում սոցիալական, կրթական, առողջապահական ծառայություններ մատուցող կառույցների քարտեզագրում՝ շեշտադրելով մասնավորապես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների և նրանց երեխաների հետ աշխատող կառույցներին: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ձեռնարկվել են հետևյալ գործողությունները.

- ➢ ***Շահագրգիռ կողմերի քարտեզագրում և տվյալների բազայի ստեղծում*** – Մշակվել է տեղեկատվական բազա, որը ներառում է շահագրգիռ կառույցների տվյալները, նրանց գործունեության ուղղությունները, մատուցվող ծառայությունները և համագործակցության հնարավորությունները:
- ✓ ***Տարածաշրջանային հաստատությունների հետ կապի հաստատում*** – Հաշվետու ժամանակահատվածում ծրագրային թիմը հանդիպումներ է անցկացրել կամ հեռախոսային կապ է հաստատել հետևյալ հաստատությունների հետ՝
- ✓ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ***Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին***
- ✓ Սյունիքի մարզի ***Միասնական սոցիալական ծառայություններ,*** մասնավորապես ***Գորիսի տարածքային կենտրոն***
- ✓ «Սյունիքի մարզի ընտանիքի և երեխաների աջակցության կենտրոն»
- ✓ ***Գորիսի Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն***
- ✓ ***Տեղ համայնքի համայնքապետարան և գյուղական բնակավայրերի վարչական պատասխանատուներ,*** սոցիալական աջակցության բաժին, ԽՀՀ հանձնաժողով
- ✓ ***Հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններ***
- ✓ ***Գորիս քաղաքի բժշկական կենտրոն***
- ✓ Տեղի և Խնձորեսկի ***Առողջության առաջնային պահպանության կենտրոններ***
- ✓ Գորիսի Ոստիկանության ***«Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնությունների կանխարգելման բաժին»***
- ➢ ***Ծառայությունների մատուցման շրջանակների հստակեցում*** – Քննարկվել են գործընկեր կառույցների գործունեության դաշտը, առկա ծառայությունները, փոխգործակցության ձևաչափերը և ծրագրի շրջանակում նրանց ներգրավվածության հնարավորությունները՝ համատեղ ջանքերն ուղղելու կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներին աջակցությանը, նրանց կյանքի որակի դրական փոփոխությանը:
- ➢ ***Գործընկեր կառույցների հետ փոխըմբռնման հուշագրերի կամ համագործակցության ձևաչափերի մշակման գործընթացի մեկնարկ*** – Որոշ հաստատությունների հետ քննարկվել է իրավական ձևակերպումների,

մասնավորապես համագործակցության հուշագրերի կնքման անհրաժեշտություն՝ գործընկերության ամրապնդման համար: *Հուշագրերի կնքման գործընթացը կիրականացվի ծրագրի հաջորդ եռամսյակում:*

- ✓ ***Տեղեկատվական արշավ և համայնքային իրազեկում*** – Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հանրային իրազեկման արշավներ Տեղ համայնքի 7 բնակավայրերում՝ ապահովելով ծրագրի և ծառայությունների մասին տեղեկատվության հասանելիությունը նպատակային խմբերին:

Շահագրգիռ կողմերի ներգրավման և համագործակցության գործընթացը շարունակական է: Ծրագրի հաջորդ եռամսյակում նախատեսվում են նոր այցեր՝ միջանկյալ արդյունքների քննարկման, հետագա համատեղ գործողությունների պլանավորման և ծառայությունների որակի բարելավման նպատակով:

***Գործողություն 2. Շահառուների գրանցում. երեխաների և ընտանիքների ներառում մատուցվող ծառայություններում***

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակում 2025 թվականի հունվար ամսվա սկզբին մեկնարկել է 0-18 տարեկան երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատանքը:

Մատուցվող ծառայություններում շահառուների ներառումը իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերման, նրանց կարիքների գնահատման և համապատասխան ծառայություններում (կենտրոնում կամ արտակենտրոն) նրանց ներգրավման փուլերով: Այն ներառում է՝

- ***Տեղեկատվության ստացում***

Ծրագրի մասնագիտական թիմը (կենտրոնի համակարգող, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ) տեղեկություն է ստացել հնարավոր դժվարին իրավիճակում գտնվող երեխայի մասին: Տեղեկատվության աղբյուր կարող են լինել՝

- ✓ Համայնքային կառույցները (ՄՍԾ, համայնքապետարան. ԽՀՀ մարմին, դպրոց, մանկապարտեզ. առողջապահական հաստատություն)
- ✓ Ծնողը/խնամակալը կամ հարազատները
- ✓ ԳՈՒՄ ՀԿ-ի մասնագետների դիտարկումները

- ***Տնայց և կարիքների գնահատում***

Տեղեկատվությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում մասնագիտական թիմը իրականացնում է ***տնայց***: Տնայցի ընթացքում իրականացվում է ընտանիքի և երեխայի ***կարիքների մանրամասն գնահատում***, որը ներառում է՝

- ✓ Երեխայի սոցիալական, կրթական, առողջապահական կարիքների վերլուծություն
- ✓ Ընտանեկան միջավայրի և հնարավոր ռիսկերի գնահատում
- ✓ Ծառայությունների մատուցման անհատական պլանի մշակում

- ***Ծառայություններում ներգրավում***

Կարիքների գնահատման արդյունքների հիման վրա երեխան և ընտանիքը ներգրավվում են կարիքահեն ծառայություններում (ներառյալ արտակենտրոն Կոռնիձոր, Քարաշեն, Արավուս. Խնածախ, Վաղատուր և Խոզնավար բնակավայրերում): Ծառայության մատուցումը շարունակվում է մինչև շահառուի կարիքների բավարարումը. արդյունքների ձեռքբերումը:

- ***Հետևողականություն և աջակցություն***

Մասնագիտական թիմը պարբերաբար վերանայում է շահառուի վիճակը՝ կատարելով անհատական զարգացման ծրագրի վերանայումներ: Մասնագիտական թիմը խթանում է նաև շահառուների հետ ակտիվ ***հետադարձ կապը***, որպեսզի ծառայությունները լինեն առավել նպատակային և արդյունավետ:

Այսպիսով, հաշվետու եռամսյակում սույն գործողությունն իրականացվել է սահմանված ընթացակարգի համաձայն՝ ապահովելով դժվարին իրավիճակում հայտնված շահառուների

կարիքներին արդյունավետ արձագանքումը և անհրաժեշտ միջամտությունները:
Հունվար-մարտ եռամսյակում կենտրոնում և արտակենտրոն մատուցվող ծառայություններում ընդգրկվել է ընդհանուր թվով 169 երեխա, որից 100 ԱՍՀՆ-ի, իսկ 69-ը՝ ԳՈՒՄ ՀԿ-ի ֆինանսավորմամբ: Ծառայություն ստացող 169 երեխաներից 34-ը Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներ են: Ներգրավված երեխաներից 41-ը ծառայություն են ստանում բնակավայրերում՝ արտակենտրոն, իսկ մյուսները՝ ցերեկային կենտրոնում:
Ըստ ամիսների ծառայություններ ստացողների թիվը հետևյալն է՝

- ✓ հունվար՝ 107
- ✓ փետրվար՝ 164
- ✓ մարտ՝ 169

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ներգրավված 169 երեխաներն և նրանց ընտանիքները ընդգրկվել են ներքոնշյալ ծառայություններում ու միջոցառումներում.

- ✓ Կյանքի հմտություններ զարգացման, քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության և անձի զարգացման խմբակներ
- ✓ Համայնքային միջոցառումներ ու տոնակատարություններ
- ✓ Լոգոպեդի աջակցություն խոսքի և հաղորդակցման խնդիրներ ունեցող երեխաներին,
- ✓ Հոգեբանական անհատական և/կամ խմբային աջակցություն երեխաներին,
- ✓ Հոգեբանական անհատական աջակցություն ծնողներին,
- ✓ Արտթերապիայի պարապմունքներ,
- ✓ Անձնական ուղեկցողի աջակցություն հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին,
- ✓ Սոցիալական դեպքերի վարում կյանքի դժվարին իրավիճակում հայտված ընտանիքների հետ համայնքային սոցիալական աշխատողի, ԽՀՀ մարմնի ու ՄՍԾ աշխատակիցների հետ համագործակցության շրջանակներում,
- ✓ Կանխարգելման բաղադրիչով աշխատանք ընտանիքի հետ՝ երեխայի մոտը շուրջօրյա խնամքի հաստատություններ կանխելու նպատակով,
- ✓ Ծնողավարման դասընթացներ կենցաղավարության, դրական ծնողավարության ու ֆինանսական գրագիտության ուղղություններով,
- ✓ Իրավաբանական խորհրդատվություն:

Պատրաստվել են ծառայություններում ներգրավվող շահառուների/երեխաների անհատական փաթեթները, որը ներառում է՝

- ✓ Հաշվառման թերթիկ/ Տիտղոսաթերթ
- ✓ Հրաման /ծառայություններում ներգրավվելու վերաբերյալ/
- ✓ Ծնողի/խնամակալի դիմում
- ✓ Ծնողի հետ համաձայնագիր/պայմանագիր՝ նեղ մասնագետների կողմից ծառայություն ստանալու վերաբերյալ/.
- ✓ Ծնողի համաձայնագիր / կենտրոնում երեխային չոր սնունդ ստանալու վերաբերյալ/,
- ✓ ԿԴԻԳ հարցաթերթ
- ✓ Ռիսկի գործոնների գնահատման թերթիկ
- ✓ Անհատական զարգացման ծրագիր/ԱԶԾ
- ✓ Երեխայի և ծնողների անձնական փաստաթղթեր/ անձնագիր/նույնականացման քարտ, ծննդյան վկայական, սոցիալական քարտ/
- ✓ Երեխայի ֆունկցիոնալության գնահատման թերթիկ /առկայության դեպքում/
- ✓ ՏՄԱԿ-ի վկայագիր կամ եզրակացություն /առկայության դեպքում/
- ✓ Երեխայի հիվանդությունների վերաբերյալ էպիկրիզներ/առկայության դեպքում/
- ✓ Վկայականներ առկայության դեպքում /ծնողի մահվան, խնամակալության. այլ/
- ✓ Դիմում կամ եզրակացություն ծառայության ավարտի վերաբերյալ

Կենտրոնը վարում է նաև գրանցամատյաններ

- ✓ Հաշվառման մատյան. հրամանագիրք (շահառուների ընդգրկում և դուրսգրում)

- ✓ Երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցամատյան

***Գործողություն 3. Շահառուների կարիքների և կարողությունների գնահատում***

Ծրագրի մեկնարկային փուլից ծրագրային թիմը իրականացրել է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների բացահայտում, շահառուների կարիքների գնահատում, ինչպես նաև նախորդ տարվա ավարտին ներգրավված երեխաների կարիքների թարմացում: Շահառուների ***կարիքների գնահատումն իրականացվել է*** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի 163-Ն համարի հրամանով սահմանված ***ԿԴԻԳ հարցաթերթի*** միջոցով: Գործընթացը կազմակերպվել է ***համայնքային սոցիալական աշխատողների, ՄՍՏ Գորիսի ՏԿ-ի սոցիալական աշխատողների և այլ շահագրգիռ կողմերի*** հետ համագործակցային մոտեցմամբ՝ ապահովելու առավել հասցեական աջակցություն: Կարիքների գնահատման գործընթացում, ըստ անհրաժեշտության, սոցիալական աշխատողներին են միացել նաև կենտրոնի հոգեբանը, լոգոպեդը, հատուկ մանկավարժը: Կարիքների գնահատման նման համագործակցային մոտեցումը նպաստում է հատկապես դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների և նրանց երեխաների շարունակական բացահայտմանը, ցուցաբերվող համալիր աջակցությանը և հաստատություններում նրանց հայտնվելու ռիսկի կանխարգելմանը:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է թվով 169 երեխաների կարիքների գնահատում, որոնց հիման վրա պատրաստվել են նրանց անհատական փաթեթները:

Կարիքների գնահատումը մեկնարկել է սոցիալական աշխատողների կողմից տնայցերի իրականացմամբ: Այն կարևոր է շահառուների իրական պայմաններին տեղում ծանոթանալու, նրանց կարիքներն առավել օբյեկտիվ գնահատելու և համապատասխան ծառայությունների մատուցումն ապահովելու համար: Սոցիալական աշխատողները պահպանել են սերտ կապ ծնողների հետ. բացի կատարված տնային այցերից, ծնողները հրավիրվել են նաև կենտրոն՝ մասնակցելու տարաբնույթ հանդիպումների:

Կարիքների գնահատման արդյունքում բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնի մասնագիտական թիմի կողմից նախանշվել են երեխաների՝ կարիքից բխող ծառայությունները, կազմվել են թեմատիկ պլաններն ու աշխատանքային գրաֆիկները:

Հաշվետու ժամանակահատվածում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ***երեխաների շրջանում բացահայտված հիմնական կարիքներն ու դժվարություններն են՝***

- ✓ ***Սոցիալական մեկուսացվածություն*** – երեխաների շրջանում սահմանափակ սոցիալական կապեր և շրջապատի հետ ինտեգրման դժվարություններ
- ✓ ***Հաղորդակցման հմտությունների պակաս*** – դժվարություններ շփման, կարծիք արտահայտելու և համագործակցային հմտությունների զարգացման մեջ
- ✓ ***Կրթության մեջ ոչ լիարժեք ընդգրկվածություն*** –դպրոց հաճախելու դժվարություններ, անկանոն և շատ ցածր հաճախելիություն,
- ✓ ***Խոսքի և հաղորդակցման հետ կապված դժվարություններ*** – խոսքի խանգարում, արտասանության կամ բառապաշարի զարգացման հապաղում, ուշացում,
- ✓ ***Վարքային խնդիրներ*** – ագրեսիվ վարք, կանոններին չհետևելու կամ սոցիալական միջավայրին դժվարությամբ հարմարվելու խնդիրներ,
- ✓ ***Հոգեբանական խնդիրներ*** – սթրես, անհանգստություն, վախեր, շփման դժվարություններ, ցածր ինքնագնահատական, նախաձեռնողական բացակայություն
- ✓ ***Մանր մոտորիկայի զարգացման դժվարություններ*** – ձեռքի մանր շարժումների զարգացման հետ կապված խնդիրներ, որոնք կարող են ազդել գրելու, նկարելու և այլ հմտությունների վրա
- ✓ ***Մեդիա գրագիտության պակաս*** – տեղեկատվության վերլուծման, տարբերակման, անվտանգ համացանցային վարքի պակաս
- ✓ ***Սովորելու հետ կապված խնդիրներ*** - Ուշադրության կենտրոնացման

դժվարություններ. ուսումնական նյութը ընկալելու և վերարտադրելու դժվարություններ դժվարություններ

- ✓ ***Ոչ ֆորմալ կրթության պակաս*** – զարգացնող արտադպրոցական դասընթացների, ակումբների, խմբակների սահմանափակ հասանելիություն
- ✓ ***Մասնագիտական կողմնորոշման բացակայություն*** – ապագա մասնագիտության վերաբերյալ պատկերացումների և ընտրության դժվարություններ
- ✓ ***Համայնքային միջոցառումներին ներգրավված լինելու հնարավորության բացակայություն*** – հասարակական կյանքի մասնակցության և սոցիալականացման սահմանափակ հնարավորություններ գյուղական բնակավայրերում
- ✓ ***Աշխատանքային հմտությունների պակաս*** – ապագա մասնագիտական ներուժի բացակայություն, ինքնուրույնության ցածր մակարդակ, գործնական հմտություններ ձեռք բերելու դժվարություններ աշխատարանների բացակայության պատճառով
- ✓ ***Ժամանցի արդյունավետ կազմակերպման դժվարություններ*** – խաղերի, սպորտի, ստեղծագործական գործունեության սահմանափակ հնարավորություններ հեռավոր գյուղական բնակավայրերում

Ընտանիքների շրջանում բացահայտված հիմնական կարիքներն ու դժվարություններն են՝

- ✓ Կենցաղավարման հմտությունների պակաս ծնողների շրջանում
- ✓ Ծնողավարման հմտությունների պակաս ծնողների շրջանում
- ✓ Իրավաբանական հարցերի շուրջ գրագիտության պակաս ծնողների շրջանում
- ✓ Ֆինանսական գրագիտության պակաս ծնողների շրջանում
- ✓ Սոցիալական մեկուսացվածություն և աջակցող ցանցերի բացակայություն

***Գործողություն 4. Շահառուների անհատական զարգացման ծրագրերի մշակում***

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն հաճախող երեխաների կարիքների խորը գնահատման արդյունքների հիման վրա սոցիալական աշխատողների և նեղ մասնագետների կողմից (սոցիալական աշխատող, հոգեբան, լոգոպեդ, արտթերապիստ, հատուկ մանկավարժ) կազմվել են բոլոր երեխաների ***անհատական զարգացման ծրագրերը*** (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N 1444-Ն որոշում), որոնց համապատասխան կազմակերպվում է կարիքի վրա հիմնված ծառայությունների տրամադրումը:

ԱԶԾ-ներում սահմանվել են ընտանիքի և երեխայի հետ տարվող աշխատանքի նպատակները, դրանց հասնելու գործիքները, քայլերը, ժամանակացույցը, միջանկյալ ու վերջնական արդյունքները: Առանձնացվել են առաջնային միջամտության կարիք ունեցող երեխաների տվյալները՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, կրթական, վարքային և սոցիալական կարիքները: Ծառայությունների տրամադրումը կազմակերպվում է ըստ ***անհատականացված մոտեցման***, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ արձագանքել յուրաքանչյուր երեխայի կարիքներին:

Անհատական զարգացման ծրագրերում ներառված է անձնական ուղեկցողի աջակցության հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքում: Անձնական ուղեկցողը աշխատում է խմբակավարին կից, ակտիվ ներգրավված է նաև ծնողների հետ տարվող աշխատանքներում:

***Գործողություն 5. Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում, ցերեկային ծառայությունների տրամադրում կենտրոնում և արտակենտրոն***

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը տրամադրել է ***ցերեկային խնամքի ծառայություններ***, որոնց հիմնական նպատակն **է** երեխաների ***հոգեբանական բարեկեցության ապահովումը, սոցիալական ինտեգրացիայի աջակցումը և կյանքի կարևոր հմտությունների զարգացումը***: Մեկնարկային փուլում մասնագետները ձևավորել են

շահառուների խմբերը ըստ տարիքային առանձնահատկությունների. կազմել են գործողությունների օրացուցային պլանները, թեմատիկ պլանները, խմբերի հաճախումների և մասնագետների արտակենտրոն այցերի ժամանակացույցը: Արտակենտրոն այցելությունները Տեղ համայնքի գյուղական բնակավայրեր իրականացվում է շաբաթական 3 անգամ՝ մասնագետների շրջիկ թիմի կողմից:
Ծառայությունները ներառել են՝

1. ***Կյանքի հիմնական հմտությունների զարգացման խմբակներ***

- ✓ ***Հաղորդակցման և համագործակցության հմտությունների զարգացում*** տարբեր խմբային դասերի. հմտությունների փոխանցման պարապմունքների միջոցով:
- ✓ ***Հասարակական միջավայրում կողմնորոշվելու և ինքնուրույնության հմտությունների ուսուցում*** (օրինակ՝ հասարակական տրանսպորտից օգտվելու, խանութից գնումներ կատարելու, մարդկանց ողջունելու, հաջողություն մաղթելու, շնորհակալ լինելու կարողություններ) :
- ✓ ***Ինքնօգնության և անձնական հիգիենայի դասընթացներ***՝ առօրյա ինքնուրույնության զարգացման նպատակով:
- ✓ ***Մեդիագրագիտության դասընթացներ***՝ անվտանգ համացանցային վարքագիծ ձևավորելու և մեդիա գործիքները ինքնակրթությանն ու զարգացմանն ուղղելու համար:
- ✓ ***Անձի զարգացում և քաղաքացիական կրթության պարապմունքներ***՝ երեխաների աշխարհաճանաչողության ընդլայնման, իրավական կրթության ապահովման համար:

2. ***Նեղ մասնագիտական աջակցություն***

- ✓ ***Անհատական և խմբային հոգեբանական աջակցություն*** երեխաների հուզական կայունության. ինքնագնահատականի բարձրացման և խոցելի երեխաների սոցիալական ադապտացիայի նպատակով:
- ✓ ***Սթրեսի և տրավմաների հաղթահարման ծրագրեր.*** մասնավորապես Արցախից բռնի տեղահանված երեխաների ներգրավմամբ:
- ✓ ***Արտթերապևտիկ պարապմունքներ***՝ հույզերի արտահայտման և ինքնարտահայտման խթանման համար:
- ✓ ***Լոգոպեդի ծառայություն***՝ խոսքի, լեզվի և հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների աջակցության համար:
- ✓ ***Հատուկ մանկավարժի անհատական աջակցություն***՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների սոցիալական ներառմանը և ինքնուրույնության զարգացման նպատակով:

3. ***Ոչ ֆորմալ կրթական և արտադասարանային ծրագրեր***

- ✓ ***Ստեղծագործական հմտությունների զարգացման խմբակներ*** (նկարչություն. ձեռագործություն, թատերական ներկայացումների բեմադրություն) :
- ✓ ***Զարգացման և ժամանցային պարապմունքներ***՝ երեխաների ստեղծագործական, ճանաչողական և սոցիալական հմտությունների զարգացման համար:
- ✓ ***Կենսական կարևոր թեմաներով կրթական հանդիպումներ***՝ առողջ ապրելակերպ. հիգիենա, էկոլոգիա, իրավունքների պաշտպանություն:

4. ***Արտակենտրոն ծառայություններ և համայնքային ինտեգրում***

- ✓ ***Համայնքային միջոցառումներին ներգրավում*** երեխաների սոցիալական միջավայրի ընդլայնման և համայնքի հետ կապի ամրապնդման համար:
- ✓ ***Այցելություններ համայնքի տարբեր կառույցներ***՝ համայնքային կյանքի ինտեգրման, մասնագիտական կողմնորոշման, սոցիալական ներառման և տեղեկատվական-խորհրդատվական աջակցության տրամադրման նպատակով:

5. ***Սոցիալական աջակցություն և դեպքերի կառավարում***

- ✓ ***Սոցիալական աշխատողի մասնագիտական ծառայություն*** շահառուների կարիքների գնահատման. աջակցման ծրագրերի մշակման և սոցիալական դեպքերի կառավարման նպատակով:
- ✓ ***Ծնողավարման դասընթացներ***՝ դրական դաստիարակության մեթոդների ուսուցում,

ընտանիքի ներսում հաղորդակցության բարելավում, դժվար իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունների զարգացում:

- ✓ ***Իրավաբանական խորհրդատվություն՝*** ընտանիքներին իրենց իրավունքների, սոցիալական ծրագրերից օգտվելու հնարավորությունների, երեխայի պաշտպանության և այլ իրավական հարցերի վերաբերյալ իրազեկելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվել է

- 169 երեխա
- 104 ընտանիք

Ծառայությունների ներգրավվածության ցուցանիշներ

- Կյանքի հիմնական հմտությունների զարգացման ծրագրերին մասնակցել է 158 երեխա
- Հոգեբանական անհատական աջակցություն է ստացել 9 երեխա
- Լոգոպեդի ծառայություն է ստացել 4 երեխա
- Հատուկ մանկավարժի անհատական աջակցություն է ստացել 15 երեխա
- Արտաքերակարգային պարապմունքներին մասնակցել է 151 երեխա
- Արտակենտրոն միջոցառումներին ներգրավվել է 41 երեխա
- Ծնողավարման դասընթացներին մասնակցել է 55 ծնող
- Իրավական հարցերի շուրջ խորհրդատվություն է ստացել 10 ընտանիք

***Գործողություն 6. Կյանքի հմտությունների զարգացման խմբակների իրականացում***

Կենտրոնի ծառայություններից օգտվող 169 երեխա (որից 34-ը արցախցի) ներգարվվել է կյանքի հմտությունների զարգացման խմբակներում՝ ըստ տարիքային երեք խմբերի՝ կրտսեր, միջին և ավագ: Պարապմունքներն անց են կացվել «Բարեկամ» կենտրոնում (ՀՀ, Սյունիքի մարզ, գյ. Տեղ, Ս. Բարխուդարյան 11), որը գործում է 6-օրյա աշխատանքային գրաֆիկով՝ երկուշաբթի-շաբաթ, ժամը 09:30-ից մինչև 18: 00-ն: Յուրաքանչյուր պարապմունքի տևողությունը 2 ժամ է: Արտակենտրոն պարապմունքները անց են կացվել Կոռնիձոր, Խնածախ և Վաղատուր բնակավայրերում՝ համագործակցելով դպրոցների և վարչական ղեկավարների հետ: Վաղատուր բնակավայրի վարչական շենքում տրամադրվել է հարմարեցված խմբասենյակ, իսկ մյուս երկու բնակավայրերում պարապմունքներն անց են կացվել դպրոցներում:
Անհատական զարգացման ծրագրերի (ԱԶԾ) հիման վրա մշակվել են ամսական թեմատիկ պլանները: Ցերեկային կենտրոնում ծառայությունը մեկնարկել է ծրագրի առաջին՝ հունվար ամսվանից, իսկ արտակենտրոն՝ մարտին:
Ամենօրյա պարապմունքներն ուղղված են երեխաների մոտ՝

- ✓ Մանր մոտորիկայի և ուշադրության կենտրոնացման զարգացմանը,
- ✓ Երևակայության և ինքնաճանաչման հմտությունների ձևավորմանը,
- ✓ Սոցիալական, հաղորդակցման, շփման, կենցաղավարության և կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը,
- ✓ Ցանկալի վարքի ձևավորմանը, հուզական վիճակի կայունացմանը,
- ✓ Աշխարհաճանաչողության ընդլայնմանը,
- ✓ Վերլուծական և բնադատական մտածողության զարգացմանը,
- ✓ Ինքնուրույնության և պատասխանատվության ձևավորմանը:

***Գործողություն 7. Անձի զարգացում, քաղաքացիական կրթություն, մեդիագրագիտություն. Պարապմունքների իրականացում***

«Բարեկամ» կենտրոնում մատուցվող կյանքի հիմնական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված ծառայությունների շրջանակում իրականացվում են նաև ***անձի զարգացման, քաղաքացիական կրթությանն ու մեդիագրագիտության պարապմունքներ***: Դրանք իրականացվում են խմբակավարների կողմից, անհրաժեշտության դեպքում, ելնելով

թեմայի առանձնահատկությունից, ներգրավվում են նաև այլ մասնագետներ: Պարապմունքներն անց են կացվում ըստ մշակված թեմատիկ պլանների և ժամանակացույցի: Հաշվետու ժամանակահատվածում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին՝

*Անձի զարգացում*

- ✓ Վարվելակարգ, քաղաքավարության կանոններ
- ✓ Կենցաղավարություն
- ✓ Մաքրության պահպանում
- ✓ Անձնական հիգիենա. անձնական իրերի կարգուկանոն
- ✓ Հագուստի խնամք
- ✓ Ինքնասպասարկման հմտություններ
- ✓ Օրվա ռեժիմ
- ✓ Ճանապարհային նշանների ճանաչում

*Մեդիագրագիտություն*

- ✓ Անվտանգություն և գաղտնիություն համացանցում
- ✓ Կեղծ լուրերի ճանաչում
- ✓ Հեռուստատեսության և սոցիալական ցանցերի դրական ու բացասական ազդեցությունները

*Քաղաքացիական կրթություն*

- ✓ Երեխաների իրավունքներն ու պարտականությունները
- ✓ Հավասարություն և խտրականություն
- ✓ Կոնֆլիկտները և նրանց ծագման պատճառները. կարգավորման ուղիներ
- ✓ Բարեկիրթ հաղորդակցում
- ✓ Հարգանք և բարեկամություն
- ✓ Վարվեցողության կանոններ

Պարապմունքները իրականացվել են տեսական ու գործնական մեթոդների համադրմամբ: Յուրաքանչյուր թեմայի շուրջ պատրաստվել են դիդակտիկ նյութեր, իրականացվել է պարզեցված, երեխաների տարիքին ու կարիքներին համապատասխան ուսուցում, որպեսզի այն հասանելի լինի նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին:

***Գործողություն 8. Մասնագիտական կողմնորոշման խմբակների իրականացում***

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված պարապմունքները նախատեսվում է անցկացնել հաջորդ եռամսյակում: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝

- Մշակվել է ***«Խոհարարություն»*** խմբակի թեմատիկ պլանը,
- Տարածվել են հայտարարություններ մասնակիցների ներգրավման նպատակով,
- Կատարվել է խմբակավարների նախապատրաստում՝ պարապմունքների արդյունավետ կազմակերպման համար.
- Նախապատրաստվել են ուսումնական նյութեր և գործնական դասընթացների համար անհրաժեշտ միջոցներ:

Հաջորդ եռամսյակում նախատեսվում է կազմակերպել առաջին գործնական պարապմունքները՝ մասնակիցներին հնարավորություն տալով ձեռք բերել կիրառական հմտություններ իրենց հետաքրքրող մասնագիտությունների շրջանակում:

***Գործողություն 9. Արտթերապևտիկ ծառայությունների իրականացում***

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի երեխաները ներգարվվել են արտթերապևտիկ պարապմունքներում, որոնք նպատակ ունեն աջակցելու նրանց հուզական կայունության ձևավորմանը, մանր ու խոշոր մոտորիկայի զարգացմանը, ինչպես նաև երեխաների ուժեղ կողմերի բացահայտմանն ու խթանմանը: Պարապմունքներն անց են կացվել խմբային

ձևաչափով՝ բոլոր տարիքային խմբերում՝ զուգակցվելով կյանքի հմտությունների զարգացման խմբակների, համայնքային միջոցառումների, հետաքրքիր թեմատիկ հանդիպումների, խոսքային և սոցիալական հմտությունների զարգացման պարապմունքների հետ՝ ապահովելով առավել ընդգրկուն ու բազմակողմանի մոտեցում: Հաշվետու ժամանակահատվածում ծառայության մեջ ընդգրկվել է ընդհանուր թվով 151 երեխա: Արտթերապևտիկ պարապմունքների ընթացքում շեշտադրվել են թերապիայի հետևյալ ուղղությունները՝

✓ ***Նկարչական թերապիա*** – հույզերի արտահայտման, ստեղծագործական մտածողության զարգացման և ներքին լարվածության նվազեցման նպատակով:
✓ ***Ավազաթերապիա*** – սթրեսի և տրավմատիկ փորձառությունների հաղթահարման, ինքնարտահայտման և երևակայության զարգացման համար:
✓ ***Երաժշտաթերապիա*** – լսողության, ռիթմիկ շարժումների, հուզական արտահայտման և ինքնակարգավորման հմտությունների խթանման համար:
✓ ***Հեքիաթաթերապիա*** – սեփական հույզերի ճանաչման և արտահայտման, հուզական կայունացման, վախերի հաղթահարման ու ցանկալի վարքի դրսևորման նպատակով:

Այս թերապևտիկ մեթոդները կիրառվել են երեխաների անհատական կարիքներին համապատասխան՝ ապահովելով նրանց հուզական բարեկեցությունը:

***Գործողություն 10. Լոգոպեդական ծառայության մատուցում***

Լոգոպեդական ծառայության մատուցումը մեկնարկել է հունվար ամսվա սկզբին: Ծառայությունը ներառում է խոսքի ընդհանուր թերզարգացման, բառապաշարի հարստացման, ինչյունաարտաբերական խնդիրների շտկման ուղղությամբ անհատական աշխատանքներ:
Հունվար-մարտ ժամանակահատվածում լոգոպեդի մասնագիտացված ծառայության մեջ ներգրավվել 4 երեխա: Նրանցից 2-ը ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Հաշվետու եռամսյակի ավարտին ծառայությունը որևէ երեխայի հետ չի ավարտվել:
Յուրաքանչյուր երեխա ծառայություն է ստանում շաբաթական 1-2 անգամ, ըստ կարիքի՝ 30 րոպեից մինչև 1 ժամ տևողությամբ: Երեխայի առաջընթացը և դրական փոփոխությունը մասնագետի կողմից նշվում է երեխայի անհատական օրագրում: Արդյունավետության բարձրացման համար լոգոպեդի ծառայություն ստացող երեխաները զուգահեռ ներգրավվում են նաև կյանքի հմտությունների զարգացման խմբակներում, հոգեբանական աջակցության և արտթերապիայի ծրագրերում:

***Գործողություն 11. Հոգեբանական աշխատանք երեխաների և ծնողների հետ***

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի հոգեբանի կողմից իրականացվել են հոգեբանական - խորհրդատվական աշխատանքներ կենտրոնի երեխաների և ծնողների հետ: Հոգեբանի կողմից գնահատվել են շահառուների կարիքները անհատական զրույցների և հարցարանների միջոցով, որից հետո երեխաները ներգրավվել են անհատական կամ խմբային հոգեբանական աջակցության ծրագրերում, իսկ ծնողները՝ ծնողավարման դասընթացներին:
Հունվար-մարտ եռամսյակում հոգեբանական աշխատանք է իրականացվել 74 երեխայի և 18 ծնողի հետ: Ներգրավված 74 երեխաներից 9-ի հետ իրականացվել է անհատական հոգեբանական աշխատանք, մյուսները ներգրավված են խմբային պարապմունքների մեջ, որի մաս է կազմել նաև արտթերապիան:
Հոգեբանական աջակցություն ստացող երեխաներից 15-ը ունեն հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ: Նրանցից 7-ը գնահատվել և մասնագիտական ծառայություններ են ստանում Գորիսի Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից կողմից, որի հետ համագործակցության շրջանակում կազմակերպվում է երեխաների հետ տարվող աշխատանքը՝ ծառայությունների կրկնությունից խուսափելու և արդյունավետությունը ապահովելու համար:

Ծնողների հետ տարվող անհատական խորհրդատվություն է ստացել թվով 18 ծնող:
Հաշվետու եռամսյակում հոգեբանական աշխատանքը ներառել է հետևյալ բաղադրիչները՝

- ✓ Հոգեբանական կարիքների առաջնային գնահատում,
- ✓ Հոգեբանական շարունակական աշխատանք.
- ✓ Հոգեբանական խորհրդատվություն.
- ✓ Իրազեկման հանդիպումներ:

Հոգեբանական ծառայության մեջ ներգրավված երեխաները ունեն հետևյալ հիմնական կարիքները և խնդիրները՝

- ✓ Վարքային խնդիրներ
- ✓ Հուզակամային ոլորտի խնդիրներ
- ✓ Վախեր, խորը անհանգստություն
- ✓ Ինտելեկտուալ ոլորտի խնդիրներ
- ✓ Շփման դժվարություններ
- ✓ Մանր և խոշոր մոտորիկայի հետ կապված խնդիրներ

Կենտրոնի կողմից հոգեբանական աջակցություն ստացող երեխաների մոտ առկա խնդիրները/հաշմանդամության տեսակներն են՝

- ✓ Դաունի համախտանիշ
- ✓ Աուտիզմ և աուտիստիկ սիմպտոմատիկա
- ✓ Աճի խանգարում
- ✓ Լսողության խորը խանգարում
- ✓ Թեթև և խորը մտավոր հետամնացություն

Ցերեկային կենտրոնում հոգեբանական անհատական պարապմունքներն անց են կացվում հարմարեցված ու ռեսուրսներով հագեցած սենյակներում: Խմբային պարապմունքները զուգակցվում են կյանքի հմտությունների զարգացման խմբակների, արտթերապևտիկ պարապմունքների կամ այլ հանդիպումների հետ:
Հաշվետու եռամսյակի ավարտին ոչ մի երեխա չի ավարտել հոգեբանական անհատական աջակցությունը: Նրանց հետ աշխատանքը կշարունակվի նաև հաջորդ եռամսյակում:

***Գործողություն 12. Ծնողավարման դասընթացներ ծնողների համար***

Հունվար ամսվա վերջին մեկնարկել են ծնողավարման դասընթացները կենտրոն հաճախող երեխաների ծնողների հետ: Դասընթացները անց են կացվել կենտրոնի հոգեբանի և սոցիալական աշխատողների կողմից՝ նպատակ ունենալով աջակցել ծնողներին՝ զարգացնել իրենց ծնողավարման կարողությունները և բարելավել երեխաների հետ շփումն ու հաղորդակցումը: Դրական ծնողավարման դասընթացները հաշվետու ժամանակահատվածում անց են կացվել ծնողների կարիքներին ու խնդիրներին համապատասխան, հետևյալ թեմաների շուրջ՝

- ✓ ***«Գիտակից ծնողավարում»*** - այս թեմայի շրջանակներում քննարկվել են գիտակցված ծնողավարման սկզբունքները, որոնք օգնում են ստեղծել աջակցող, հոգատար և թեթևացնող միջավայր երեխաների համար:
- ✓ ***«Տարիքային ճգնաժամեր»*** - այս դասընթացը հարստացրել է ծնողներին գիտելիքներով այն մասին, թե ինչպես մոտենալ իրենց երեխաների տարիքի տարբեր ճգնաժամերին, ի՞նչ ռազմավարություններ կիրառել:

Դասընթացներին մասնակցել է ընդհանուր թվով 55 ծնող: Ծնողների հետ աշխատանքը շարունակվել է նաև անհատական խորհրդատվություններով, ինչպես նաև քննարկվել և անհատական խորհրդատվություն են ստացել բարձրաձայնված մասնավոր դեպքերի ու օրինակների շուրջ հարցեր: Այս դասընթացները կարևոր դեր են ունեցել ծնողների շրջանում գիտակցված ծնողավարումը խթանելու և նրանց վստահություն տրամադրելու հարցում:
Մարտ ամսվա սկզբին մեկնարկել է ծնողների հետ աշխատանքը արտակենտրոն՝ գյուղական բնակավայրերում ՝ շեշտադրելով մասնավորապես կենցաղավարությունը:

***Գործողություն 13. Առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ***

Կենտրոնը, ըստ անհրաժեշտության, ընտանիքներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ առողջապահական, սոցիալական և կրթական ոլորտներում՝ շահառուներին աջակցելու համար: Ծառայությունը ուղղված է այն ընտանիքներին, ովքեր ունեն իրավաբանական հարցեր ու խնդիրներ, որոնք վերաբերում են նրանց առողջապահական սպասարկումներին, սոցիալական ծառայությունների օգտվելուն և կրթական աջակցության հասանելիությանը:

Իրավական խորհրդատվությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ոլորտները՝

- ***Առողջապահական հարցեր՝*** պետության կողմից տրամադրվող առողջապահական ծառայությունների, մասնավորապես երեխաների, վերաբերյալ իրավաբանական հարցեր, բժշկական փաստաթղթերի ձևակերպում և այլ գործընթացներ:
- ***Սոցիալական հարցեր՝*** սոցիալական նպաստներ ստանալու համար փաստաթղթերի հավաքագրման ընթացակարգեր, պետական աջակցությանը մասնակցելու իրավունք, սոցիալական ծառայությունների հասանելիություն, նպաստների ձևակերպում:
- ***Կրթական հարցեր՝*** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթական աջակցության տրամադրման իրավական կողմերը, կրթական հիմնարկներում և հաստատություններում երեխաների տեղաբաշխման հարցեր, կրթական ծրագրերի ու ծառայությունների հասանելիություն:

Հաշվետու ժամանակահատվածում իրավական խորհրդատվություն է ստացել 17 ընտանիք, օգնելով նրանց ավելի արագ ու արդյունավետ լուծումներ գտնելու ծագած խնդիրներին:

Իրավական խորհրդատվությունների ապահովման գործընթացում կենտրոնին մասնագիտական աջակցություն է ցուցաբերել «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն:

***Գործողություն 14. Սոցիալական աշխատանք ընտանիքների հետ***

Հունվար-մարտ եռամսյակի ընթացքում կենտրոնի սոցիալական աշխատողները ակտիվորեն իրականացրել են սոցիալական աշխատանք կենտրոն հաճախող երեխաների ընտանիքների հետ՝ նպատակ ունենալով ապահովել ընտանիքներին անհրաժեշտ աջակցություն և կանխարգելել երեխաների մուտքը հատուկ հաստատություններ: Ընտանիքների հետ իրականացված սոցիալական աշխատանքը ներառել է՝

- ✓ Կարիքի գնահատում,
- ✓ Սոցիալական դեպքերի վարում,
- ✓ Ուղղորդումներ,
- ✓ Խորհրդատվություն,
- ✓ Կանխարգելում երեխաների մուտքը հատուկ հաստատություններ

Սոցիալական աշխատանքի իրականացման փուլում չեշտադրվել են համակողմանի ու բարդ սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքները: Սոցիալական դեպքերի վարման ժամանակ կենտրոնի սոցիալական աշխատողները ակտիվորեն համագործակցել են ՄՍԾ Գորիսի ՏԿ-ի և Տեղի համայնքապետարանի սոցիալական աշխատողի հետ, ինչպես նաև տարածաշրջանի կրթական ու առողջապահական այլ կառույցների հետ: Այս գործընթացում ակտիվ համատեղ աշխատանք է իրականացվել նաև դպրոցների ներգրավվածությամբ՝ ապահովելու երեխայի կրթական և սոցիալական իրավիճակի ամբողջական գնահատում, ինչպես նաև ընտանիքների և դպրոցների միջև համագործակցության խորացում: Մանկավարժների հետ քննարկվել են երեխաների վարքային ու ուսումնական դժվարությունները, երեխաների աջակցման հարցում իրականացվելիք համատեղ գործողություններ:

Սոցիալական աշխատողները գնահատել են ներգրավված 104 ընտանիքների կարիքները՝ օգտագործելով ԿԴԻԳ հարցաթերթը: Արդյունքում հաշվետու ժամանակահատվածում բացվել և վարել են 14 ընտանիքի սոցիալական դեպքեր՝ ներգրավելով 44 երեխա, մյուս բոլոր կյանքի

դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն, կատարվել են ուղղորդումներ, հետամուտ եղել ուղղորդման արդյունքներին ու ծառայությունների հասանելիությանը:
Իրականացված սոցիալական աշխատանքում ներգարվվել են ներքոնշյալ հիմնախնդիրներն ունեցող երեխաներն ու ընտանիքները

1. ***Սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքներ,*** որոնց կարիքները վերաբերում են նյութական, կրթական ու սոցիալական աջակցությանը:
2. ***Հաշմանդամություն ունեցող երեխաներ***, որոնք պահանջում են հարմարեցված սոցիալական, կրթական միջավայր, ինչպես նաև առողջական խնդիրներ ունեցող երեխաների ընտանիքներ, որոնք հաճախ դժվարանում են վերահսկել երեխաների առողջությունը և ապահովել անհրաժեշտ բժշկական ստուգումները:
3. ***Արցախից տեղահանված ընտանիքներ***, որոնք բախվում են սոցիալական ու հոգեբանական դժվարությունների, ինչպես նաև պահանջում են բնակարանային, ֆինանսական և կրթական աջակցություն: Նրանց մատուցվում են սոցիալական ուղղորդման ու խորհրդատվական ծառայություններ:
4. ***Կրթությունից դուրս մնացած երեխաներ***, ովքեր ունեն ցածր հաճախումներ կամ ամբողջությամբ դուրս են մնացել կրթական գործընթացից՝ հիմնականում սոցիալ-տնտեսական դժվարությունների, ընտանիքի աջակցության բացակայության կամ այլ սոցիալական պատճառներով: Նրանք պահանջում են լրացուցիչ աջակցություն՝ կրթությունը վերականգնելու համար:
5. ***Սոցիալապես խիստ անապահով, ինչպես նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների ընտանիքներ***, որոնց հետ անհրաժեշտ է իրականացրել կանխարգելիչ աշխատանքներ՝ երեխաների մուտքը հատուկ խնամքի հաստատություններ կանխելու նպատակով:
6. ***Ծնողական խնամքից դուրս մնացած երեխաներ՝*** անտեսման և հոգատարության պակասի պատճառով: Այս երեխաները հաճախ չեն ստանում անհրաժեշտ խնամք և ուշադրություն, ինչի հետևանքով զարգանում են հոգեբանական, սոցիալական ու կրթական դժվարություններ: Ցուցաբերվում է մասնագիտական աջակցություն, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն և այլ լրացուցիչ օգնություն:
7. ***Բռնության ենթարկված երեխաներ (ֆիզիկական, հոգեբանական),*** ովքեր հաճախ ունենում են վախեր, ցածր ինքնագնահատական, սոցիալական մեկուսացում, ագրեսիվ կամ ինքնամփոփ վարքագիծ: Նրանց տրամադրվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ տարաբնույթ մեթոդների կիրառմամբ:
8. ***Աշխատանք չունեցող ծնողների երեխաներ***, այս խմբի երեխաները հաճախ հայտնվում են ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, քանի որ նրանց ծնողները չեն կարողանում ապահովել բավարար եկամուտներ ընտանիքի կարիքները հոգալու համար: Դա բերում է խնամքի, կրթության և առողջության հետ կապված դժվարությունների, ինչն էլ իր հերթին հանգեցնում է երեխաների սոցիալական և կրթական խնդիրների:

Վերոնշյալ խմբերը հաշվետու ժամանակահատվածում ստացել են սոցիալական, հոգեբանական ու կրթական աջակցություն, ուղղորդվել տարբեր կառույցներ՝ ՄՍԾ, համայնքապետարան, կրթական, առողջապահական հաստատություններ և այլ աջակցող կազմակերպություններ: Նրանց հետ տարվող աշխատանքը գտնվում է դեռևս ընթացքի մեջ:
Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների երեխաների մուտքը հատուկ հաստատություններ կանխարգելելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է տարվել Տեղ համայնքի 2 ընտանիքի 6 երեխաների հետ:
Մասնավորապես իրականացվել է՝

- Համագործակցություն Տեղի ԽՀՀ-ի, Գորիսի ՄՍԾ-ի հետ՝ ընտանիքի խնդիրների քննարկում, լուծման առաջարկների ներկայացում

- Աշխատանք Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցի մանկավարժական կազմի հետ, որտեղ հաճախում են երեխաները
- Ծնողների ներգրավում ծնողավարման դասընթացներում
- ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից ընտանիքին հագուստի փաթեթների տրամադրում:

Հաշվետու եռամսյակում իրականացված ուղղորդումների արդյունքում՝

- 8 երեխաներ լիարժեք ներգրավվել են կրթական համակարգում
- 1 երեխայի համար իրականացվել է աշխատանք՝ ֆունկցիոնալության գնահատման ուղղությամբ. հաշմանդամությունը ճանաչվել է.
- 1 երեխայի խնամակալությունը ձևակերպվել է.
- 34 երեխաներ կենտրոնի միջնորդությամբ սկսել են հաճախել համայնքում գործող մշակութային ու արվեստի խմբակներ՝ պար, դհոլ, ֆուտբոլ, ձեռնամարտ, գործագործություն
- 15 ընտանիքի անդամներ ձեռք են բերել պետպատվերի շրջանակում անվճար բժշկական օգնություն ստանալու հնարավորություն
- 23 երեխաներ ուղղորդվել են առողջապահական հաստատություններ՝ Տեղ, Գորիս և Երևան. վերականգնողական կենտրոններ
- 1 երեխա անվճար բժշկական օգնություն է ստացել Երևանում
- 18 ընտանիք գործընկեր կառույցներից ստացել են հումանիտար աջակցության փաթեթներ
- 7 ընտանիք գործընկեր ՀԿ-ից ստացել է սննդային փաթեթ
- 5 անձ ուղղորդվել է ՄՍԾ Զբաղվածության տարածքային կենտրոն, որի արդյունքում 2 անձ գտել է հիմնական աշխատանք
- 9 երեխա ուղղորդվել է Գորիսի ՏՄԱԿ հատուկ կարիքների գնահատման նպատակով
- 2 երեխայի հատուկ կարիքները գնահատվել են Գորիսի ՏՄԱԿ-ի կողմից և երեխան սկսել է ստանալ մասնագիտական աջակցություն կառույցից
- 41 արտակենտրոն ծառայություններ ստացող երեխաների ընտանիքները շարունակաբար ստանում են սոցիալ-հոգեբանական ու իրավական խորհրդատվություններ

***Գործողություն 15. Սոցիալական աշխատանք խնամքի հաստատությունների հետ***

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի մասնագետները հեռախոսազանգերի միջոցով կապ են հաստատել խնամքի հաստատությունների հետ՝ Սյունիքի մարզից հաստատություններում գտնվող երեխաների կարգավիճակը: Պարզվել է, որ նշված չորս հաստատություններում գտնվում են առողջական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, որոնց վերամիավորման հնարավոր տարբերակներ այս պահին չեն դիտարկվում:
Սակայն ձեռք է բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություն՝ շարունակական կապի պահպանման. նոր երեխաների՝ հաստատությունում տեղավորվելուց հետո տեղեկատվության տրամադրման, անհրաժեշտության դեպքում համագործակցության լրացուցիչ մեխանիզմներ մշակելու նպատակով:

***Գործողություն 16. Կենտրոնի ծառայությունների անանուն գնահատում շահառուների շրջանում***

Կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման նպատակով մշակվել է էլեկտրոնային հարցաշար, որը փոխանցվել է բոլոր շահառուներին՝ անանուն և շարունակական գնահատումներ իրականացնելու համար: Հարցաշարը մշակվել է պարզ և հասանելի ձևաչափով, որպեսզի ծնողներն այն հեշտությամբ լրացնեն: Մարտ ամսվա սկզբին հարցաշարը տարածվել է ծնողների շրջանում: Գնահատման գործընթացը կամավոր է, և ծնողները կարող են իրենց կարծիքը հայտնել մատուցվող ծառայությունների վերաբերյալ: Անանուն հարցումների վերլուծությունը կատարվել է ԳՈՒՄ ՀԿ-ի մոնիտորինգի մասնագետի

կողմից: Անանուն էլեկտրոնային հարցաշարի հղումն է՝ https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSchhgOXs2M4JNunCzPBZosngwLUkmSzOlyAjkBKmLdh6e004Q/viewform?fbclid=IwAR33TsXRuPeFFWw8nuN0xC0xKfdvC4xnMzySN7UsSsJ8PxxNs-_mhldbOi4:

Ծառայությունների արդյունավետության գնահատման նպատակով ծրագրի խմբակավարը և սոցիալական աշխատողները պարբերաբար իրականացնում են նաև հետախուզազանգեր. զրուցում ծնողների հետ հատկապես նրանց գոհունակությանն ու դժգոհությանը վերաբերող հարցերի շուրջ, ընդառաջում շահառուների կողմից արված առաջարկություններին:

Անանուն հարցումների և հետախուզազանգերի վերլուծության արդյունքում պարզվել է, որ ***ծնողների մեծամասնությունը գոհ է կենտրոնի ծառայություններից*** և մատուցվող ծառայությունների արդյունավետությունը գնահատում է բարձր: Շատ ծնողներ առանձնացրել են իրենց երեխաների զարգացման նկատելի դրական փոփոխությունները և պատրաստակամություն են հայտնել աջակցել մասնագիտական թիմի աշխատանքին:

Ցերեկային կենտրոնում գործում է նաև հետադարձ կապի անանուն փակ արկղիկը, որը բացվում է յուրաքանչյուր ամսվա վերջին:

***Գործողություն 17. Համայնքային միջոցառումների կազմակերպում շահառու երեխաների մասնակցությամբ***

Հաշվետու եռամսյակում կենտրոն հաճախող և տարբեր ծառայություններում ներգրավված երեխաները մասնակցել են համայնքային միջոցառումներին, որոնք կազմակերպվել կենտրոնի կողմից՝ Տեղի համայնքապետարանի համագործակցությամբ: Ստորև նշված են սույն գործողության շրջանակում իրականացված միջոցառումները.

- ✓ ***Սուրբ ծնունդ*** – Հունվարի 5, թեմատիկ դաս. այց եկեղեցի
- ✓ ***Բանակի տոն*** – Հունվարի 28. թեմատիկ դաս-միջոցառում, երեխաների կողմից նամակների պատրաստում և ուղարկում զինվորներին. Հիշատակի ծաղկեդրում Տեղի հավերժության պուրակում
- ✓ ***Տրնդեզ*** – Փետրվարի 13. օրվա խորհրդի ներկայացում սահիկաշարի միջոցով, պաստառների և կենաց ծառի պատրաստում. այց եկեղեցի
- ✓ ***Գիրք նվիրելու օր/Թումանյանական օրերի շարք*** – Փետրվարի 19-25, Բաց դաս. այցելություն Գորիսի համայնքային գրադարան. Մանկական գրադարան. մասնակցություն Գորիսի Մշակույթի տան կողմից կազմակերպված միջոցառումներին, ընթերցանություն. ֆիլմի դիտում Գորիսի արվեստանոցում, այցելություն նախակրթակարաններ և Կենտրոնի երեխաների կողմից տիկնիկային ներկայացումների ներկայացում փոքրիկների համար
- ✓ ***Մայրենի լեզվի օր*** – Փետրվարի 21, սահիկաշարի ներկայացում. գորիսյան և արցախյան բարբառային բառերի ներկայացում-համադրում
- ✓ ***Բեմական խոսքի վարպետության դասեր*** – փետրվարի 21-26, գործընկեր ֆրանսիական կազմակերպության հետ համագործակցությամբ՝ մեկշաբաթյա վարպետության դասեր Տեղի ցերեկային խնամքի կենտրոնում
- ✓ ***Մայրության և գեղեցկության օր*** - Մարտի 5-12. բացիկների, պաստառների պատրաստում. միջոցառում մայրիկների համար:
- ✓ ***Երջանկության միջազգային օր*** – Մարտի 18-20. թեմային համապատասխան խաղ առաջադրանքների կատարում. պաստառների պատրաստում, քննարկումներ

Համայնքային կառույցների հետ համագործակցության շրջանակում ներգրավված երեխաները հնարավորություն են ունեցել պարբերաբար այցելելու համայնքային ու դպրոցական գրադարաններ, թանգարան, մասնակցելու տարբեր մշակութային ու սպորտային միջոցառումների:

***Գործողություն 18. Ճանաչողական ու ուսուցողական արշավների, էքսկուրսիաների

***կազմակերպում***

Ծրագրի առաջին եռամսյակում նշված գործողությունը դեռևս չի իրականացվել՝ պայմանավորված եղանակային ոչ բարենպաստ պայմաններով: Ճանաչողական և ուսուցողական էքսկուրսիաների կազմակերպումը պլանավորվում է ակտիվացնել ծրագրի երկրորդ եռամսյակից սկսած, նպատակ ունենալով հնարավորություն տալ երեխաներին բացահայտելու իրենց շրջակա միջավայրի արժեքները և ձեռք բերելու նոր գործնական փորձ:

***Գործողություն 19. Չոր սննդի տրամադրում կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններում ընդգրկված երեխաներին***

Կենտրոն հաճախող բոլոր երեխաները՝ անկախ ծառայությունը ստանալու ժամաքանակից, դասի տևողությունից, կենտրոնում կամ արտակենտրոն ծառայության մեջ ընդգրկված լինելու հանգամանքից, ստանում են չոր սնունդ: Չոր սննդի մատակարարների ընտրության համար, ըստ ԳՈՒՄ ՀԿ-ի Գնումների ընթացակարգերի, պատրաստվել և տարածվել են հայտարարություններ, ընտրվել են մատակարարները, կնքվել են պայմանագրեր և ըստ ժամանակացույցի՝ կատարվել է մատակարարումը:
Չոր սննդի փաթեթի մեջ ներառված է՝ բնական հյութ, կեքսիկ (տարբեր տեսակներ), պեչենի: Թիմի համապատասխան անդամի կողմից կազմակերպվում է սննդի ձեռքբերման և բաշխման գործընթացը՝ ըստ ժամանակացույցի և երեխաների հաճախումների գրաֆիկի: Համակարգողը հետևում է սննդի բաշխմանն ու պահեստին:

***Գործողություն 20. ՄԱՆՈՒԿ բազայում երեխաների տվյալների մուտքագրման աշխատանքներ***

Հունվար ամսվա սկզբին նշված գործողության համար պատասխանատու մասնագետները սկսել են ՄԱՆՈՒԿ տեղեկատվական բազայում շահառու երեխաների տվյալների մուտքագրման, նախկինում մուտքագրված երեխաների տվյալների թարմացման աշխատանքները: Տվյալների մուտքագրման ընթացքում մասնագետները սերտ կապ են պահպանել Սյունիքի մարզպետարանի պատասխանատու անձի, ինչպես նաև Նորք կենտրոնի կողմից վերապատրաստող մասնագետի հետ՝ ծագած տեխնիկական խնդիրներին լուծում տալու համար: Մարտի 31-ի դրությամբ ՄԱՆՈՒԿ տեղեկատվական բազա է մուտքագրվել/թարմացվել 164 շահառու երեխաների տվյալներ:

***Գործողություն 21. Շարունակական մոնիթորինգ, արդյունքների ամփոփում***

Ծրագրային թիմի, հատկապես ծրագրի ղեկավարի կողմից, շարունակաբար իրականացվում է մոնիտորինգ և ձեռք բերված միջանկյալ արդյունքների քննարկում: Այս գործընթացի արդյունքում վեր են հանվում առաջնային լուծում պահանջող խնդիրները, սահմանվում են անհրաժեշտ գործողությունները՝ սոցիալական դեպքերի վարման, կանխարգելման և ընտանիքների հետ շարունակական սոցիալական աշխատանքի ոլորտներում:
Մեծ ուշադրություն է դարձվում կյանքի դժվարին իրավիճակում հայտված ընտանիքների բացահայտմանն ու դրանց ծառայությունների մեջ ներգրավման աշխատանքներին, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ համագործակցության ուժեղացմանը: Ծրագրային թիմը և մասնագետները ունեն շաբաթական հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են օրացուցային պլաններով սահմանված գործողությունները, ծրագրի առաջընթացը և հատուկ քննարկման կարիք ունեցող դեպքերը:
Նաև, ծրագրի համակարգողը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ համայնքային սոցիալական աշխատողի և ՄՍԾ կառույցի հետ՝ գործնական տեղեկություններ փոխանակելու և նոր նպատակներ սահմանելու համար:

***Գործողություն 19. Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում***

Սկսած հունվար ամսվանից ծրագրային թիմը մշակում է համապատասխան ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ, որոնք ներկայացվում են ԱՍՀՆ-ին: Յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունը ներկայացվում է հաջորդող ամսվա առաջին շաբաթվա ընթացքում: Հունվար և փետրվար ամիսների ընթացքում ներկայացվել են տվյալ ամսվա ծառայություն ստացող երեխաների ***Շահառուների բազան և ֆինանսական հաշվետվության հավելվածները***, իսկ եռամսյակի ավարտին ներկայացվել է համախմբված ***Շահառուների բազա, ծրագրային եռամսյակային և ֆինանսական հաշվետվությունները***:

***2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (<u>Գանտի աղյուսակ</u>) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:***

Հաշվետու եռամսյակում ծրագրի աշխատանքները իրականացվել են սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակի) համաձայն: Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկած մի շարք գործողություններ ունեն շարունակական բնույթ և կիրականացվեն նաև ծրագրի հաջորդ ամիսների ընթացքում՝ առավել թիրախային խմբեր ներգրավելու և արդյունքներ ապահովելու համար:

***Իրականացված հիմնական գործողությունները և դրանց արդյունքները***

- ✓ ***Մասնագիտական թիմի ձևավորում, շարունակական կարողությունների զարգացում***

Ծրագրի մեկնարկային փուլում հավաքագրվել են ծրագրային թիմի՝ հոգեբաններ, լոգոպեդ, սոցիալական աշխատողներ, հատուկ մանկավարժ և այլ նեղ մասնագետներ, պարտականությունները, գործողությունների շրջանակը: Ձևավորվել է հմուտ աշխատանքային թիմ, որը շարունակաբար մասնակցել է կարողությունների զարգացման դասընթացների և ունակ է մատուցել որակյալ ծառայություններ:

- ✓ ***Շահառուների կարողությունների և կարիքների գնահատում, ներգրավում***

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է ներգրավված բոլոր շահառուների կարիքների գնահատում: Ծրագրում ներգրավվել են ինչպես տեղացի, այնպես էլ Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներ: Շահառուների կարիքները գնահատվել են տնայցերի իրականացմամբ: Կատարվել են տնայցեր բոլոր շահառուների ընտանիքներ:

<u>*Հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ներգրավվել է 169 երեխա, որից 100 ԱՍՀՆ-ի ֆինանսավորմամբ, իսկ 69-ը՝ ԳՈՒՄ ՀԿ-ի ներդրմամբ: Ներգրավված 169 երեխաներից 34-ը Արցախից տեղահանված երեխաներ են:*</u>

- ✓ ***Շահառուների անհատական սոցիալական ծրագրերի կազմում***

Յուրաքանչյուր շահառուի կարիքներին համապատասխան մշակվել են անհատական սոցիալական ծրագրեր, որոնք ներառել են սոցիալական, հոգեբանական և կրթական աջակցության բաղադրիչներ: ԱՍԾ-ների մշակումը հնարավորություն է տվել ապահովել նպատակային և արդյունավետ միջամտություն՝ նպաստելով երեխաների սոցիալական ինտեգրմանը, վարքային դրական փոփոխություններին, հաղորդակցման և ինքնուրույնության հմտությունների զարգացմանը, ինչպես նաև ծնողների մասնակցության ակտիվացմանը:

<u>*Մշակված անհատական սոցիալական ծրագրերի քանակը՝ 169:*</u>

- ✓ ***Երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում, ցերեկային ծառայությունների տրամադրում կենտրոնում և արտակենտրոն***

Շահառու երեխաների համար կազմակերպվել են սոցիալ-հոգեբանական աջակցության միջոցառումներ: Դրանք նպաստել են շահառու երեխաների ***ինքնավստահության***

***բարձրացմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը և սոցիալական միջավայրում ավելի ինքնուրույն գործելու կարողության ձևավորմանը***: Կյանքի հիմնական հմտությունների զարգացման պարապմունքներն օգնել են երեխաներին ***յուրացնել ինքնակարգավորումը, համագործակցային և խնդիրների լուծման հմտությունները***, ինչը դրական ազդեցություն է ունեցել նրանց վարքագծի և ընդհանուր զարգացման վրա: Արտակենտրոն ծառայությունների հասանելիությունն էլ ապահովել է, որ առավել լայն շրջանակի երեխաներ ստանան անհրաժեշտ աջակցություն՝ անկախ նրանց գտնվելու վայրից:
*Ներգրավված երեխաների թիվը՝ 169:*

- ✓ ***Խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ, հոգեբանի ու հատուկ մանկավարժի աջակցություն վարքային, հաղորդակցման դժվարություններ և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին***

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել են լոգոպեդական, հոգեբանական և հատուկ մանկավարժի ծառայություններ՝ վարքային, հաղորդակցման դժվարություններ և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին աջակցելու համար: Խոսքային խնդիրներ ունեցող երեխաների մոտ արձանագրվել է ***արտասանության և հաղորդակցման հմտությունների բարելավում***: Վարքային խնդիրներ ունեցող երեխաների մոտ նկատվել է ***զգալի առաջընթաց՝ ինքնակարգավորման, փոխհարաբերությունների և սոցիալական հմտությունների զարգացման առումով***: Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաները ստացել են անհատական աջակցություն՝ ***ուսուցման գործընթացում առաջընթաց գրանցելու նպատակով***: Ծնողների հետ տարվող աշխատանքների արդյունքում ***ավելացել է նրանց ներգրավվածությունը երեխաների զարգացման գործընթացում***.
*Լոգոպեդական ծառայությունից օգտված երեխաների թիվը՝ 4:*
*Հոգեբանի խմբային աջակցություն է ստացել 75, իսկ անհատական աջակցություն 9 երեխա:*
*Հատուկ մանկավարժի աջակցություն է ստացել 15 երեխա:*

- ✓ ***Մասնագիտական կողմնորոշում***

Ծրագրի շրջանակում կատարվել է «Խոհարարություն» խմբի նախապատրաստական աշխատանքները՝ մշակվել է թեմատիկ պլան, պատրաստվել են ուսումնական նյութեր և կազմակերպվել են գրանցումների գործընթացը: Խմբակային պարապմունքները կմեկնարկեն ապրիլին:

- ✓ ***Արտթերապևտիկ ծառայությունների իրականացում***

Նեղ մասնագետների կողմից իրականացվել են անհատական և խմբային արտթերապևտիկ պարապմունքներ: Պարապմունքներն իրականացվել են բոլոր տարիքային խմբերում՝ կյանքի հմտությունների ձեռքբերման պարապմունքներին կից: Արտթերապևտիկ պարապմունքները նպաստել են երեխաների ***ինքնարտահայտման, սոցիալականացման և ստեղծագործական մտածողության զարգացմանը***: Հատուկ կարիքներ ունեցող երեխաների ներգրավումը խառը խմբերում ***բարելավել է միջանձնային հմտությունները*** և ***հոգեբանական կայունություն*** ապահովել:
*Արտթերապիայի պարապմունքներին մասնակցած երեխաների թիվը՝ 151:*

- ✓ ***Անձի զարգացում (քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության և այլ խմբակների միջոցով).***

Քաղաքացիական կրթության, անձի զարգացման և մեդիագրագիտության խմբակները ***մեծացրել են երեխաների գիտակցությունը*** իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, ***բարելավել հաղորդակցման հմտությունները***, ***նպաստել աշխարհաճանաչողությանը***, ինչպես նաև ***զարգացրել մեդիագրագիտությունը***: Այս ամենը ապահովում է նրանց ներառումը հասարակական կյանքում:

*Անձի զարգացման խմբակներին մասնակցած երեխաների թիվը՝ 158:*

- ***Սոցիալական աշխատանք ընտանիքի հետ***

Հաշվետու եռամսյակում իրականացված սոցիալական աշխատանքի արդյունքում ձեռք են բերվել դրական արդյունքներ՝ երեխաների ներգրավվածություն պարտադիր կրթական համակարգում, համայնքային մշակութային ծրագրերում, արվեստի խմբակներում, բժշկական ծառայությունների հասանելիություն, աշխատանքային հնարավորություններ: Ընտանիքները ստացել են հումանիտար աջակցություն և մասնակցել տարբեր սոցիալական ծրագրերի:
Կատարվել են ընտանեկան խնդիրների քննարկումներ՝ ուղղված երեխաների աջակցությանը և համագործակցության խորացմանը համայնքային կառույցների և դպրոցների հետ, ինչը ունեցել է դրական արդյունքներ:

- ***Սոցիալական աշխատանք երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ***

Չնայած վերամիավորման տարբերակներ հաշվետու ժամանակահատվածում չեն արձանագրվել, այնուամենայնիվ ստեղծվել է համագործակցության հիմք՝ հետագա հնարավոր դեպքերը հայտնաբերելու և համատեղ աշխատանք իրականացնելու համար:
Այս գործընթացը հնարավորություն է տալիս խնամքի հաստատությունների և կենտրոնի մասնագետների միջև շարունակական տեղեկատվության փոխանակում ապահովել՝ նպաստելով երեխաների վերամիավորմանն ուղղված առավել նպատակային քայլերի մշակմանը:
*Կապի հաստատում շուրջօրյա խնամք իրականացնող 4 հաստատությունների հետ:*

- ***Առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվական և ուղղորդման ծառայություններ***

Իրավաբանական խորհրդատվությունների և ուղղորդման ծառայությունները զինել են ծնողներին անհրաժեշտ գիտելիքներով և աջակցության գործիքներով, ինչը նրանց օգնել է ճիշտ կողմնորոշվել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերում՝ իրավական տեսանկյունից: Ծնողներին տրամադրված դասընթացների ու խորհրդատվությունների միջոցով նրանք ավելի հստակ պատկերացում են կազմել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, ձեռք բերել ավելի վստահ և աջակցված քայլեր ձեռնարկելու հմտություններ: Հատկապես շեշտադրվել է պետական աջակցության տարբեր ծրագրերով Արցախից տեղահանված անձանց ներգրավման, փաստաթղթերի վերականգնման հարցեր:
*Իրավաբանական խորհրդատվություն է ստացել 10 ընտանիք:*

- ***Ցերեկային կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխային սննդային փաթեթի տրամադրում՝ անկախ կենտրոնում գտնվելու ժամանակահատվածից***

Ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին տրամադրված սննդային փաթեթները, որոնք ներառել են հիմնականում թեթև քաղցրավենիք կամ հյութ, ապահովել են նրանց անհրաժեշտ էներգիայի մի փոքրիկ հավելում կենտրոնում գտնվելու ընթացքում: Փաթեթը երեխային տրամադրվել է կենտրոն կատարած յուրաքանչյուր այցի ժամանակ (շաբաթական նվազագույնը 2 անգամ), ինչպես նաև արտակենտրոն պարապմունքների ընթացքում:
*Սննդային փաթեթ ստացած երեխաների թիվը՝ 169:*

- ***Երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների կառավարման վերաբերյալ դասընթացների կազմակերպում***

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծնողավարման դասընթացներ, որոնք խթանել են ծնողների գիտելիքները երեխաների խնամքի, դաստիարակության և

հոգեբանական աջակցության վերաբերյալ: Դասընթացները թույլ են տվել ծնողներին ձեռք բերել արդյունավետ հաղորդակցման հմտություններ և դրական ծնողավարություն իրականացնելու կարողություն: Հաշվետու ժամանակահատվածում անդրադարձ է կատարվել մասնավորապես դրական ծնողավարության թեմաներին: Այս միջոցառումները նպաստել են ընտանիքներում դրական փոփոխությունների ձևավորմանը:

<u>*Դասընթացների մասնակցած ծնողների թիվը՝ 55:*</u>

- ✓ ***Համայնքային միջոցառումների, կազմակերպում շահառու երեխաների մասնակցությամբ***

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են համայնքային միջոցառումներ, որոնցում ակտիվ մասնակցություն են ցուցաբերել շահառու երեխաները: Միջոցառումները նպաստել են երեխաների սոցիալական ինտեգրմանը, ինքնարտահայտման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Շահառուները հնարավորություն են ունեցել ձևավորելու առողջ սոցիալական կապեր և մասնակցելու համայնքային կյանքին, ինչը նպաստել է նրանց ինքնավստահության և սոցիալական մոտեցումների ուժեղացմանը:

<u>*Համայնքային միջոցառումներին մասնակցած երեխաների թիվը՝ 158:*</u>

- ✓ ***Ճանաչողական ու ուսուցողական արշավների, էքսկուրսիաների կազմակերպում***

Ծրագրի առաջին եռամսյակում նշված գործողությունը դեռևս չի իրականացվել՝ պայմանավորված եղանակային ոչ բարենպաստ պայմաններով: Ճանաչողական և ուսուցողական էքսկուրսիաների կազմակերպումը պլանավորվում է իրականացնել ծրագրի երկրորդ եռամսյակից սկսած:

- ✓ ***Կենտրոնի ծառայությունների անանուն գնահատում շահառուների շրջանում***

Կենտրոնի ծառայությունների անանուն գնահատման գործընթացը իրականացվել է շահառուների շրջանում, որի արդյունքում հավաքվել են օգտակար հետադարձ կապեր ծառայությունների արդյունավետության, որակի և սպասարկման ոլորտներում: Գնահատման արդյունքում պարզվել են ուժեղ կողմերը, ինչպես նաև առկա հնարավոր բարելավումները, որոնք թույլ են տալիս ավելի արդյունավետ և նպատակային մատուցել ծառայությունները:

<u>*Գնահատում կատարած շահառուների/ծնողների թիվը՝ 82:*</u>

- ✓ ***Շարունակական մոնիտորինգ, արդյունքների ամփոփում***

Ծրագրի ղեկավարի կողմից շարունակական մոնիտորինգի միջոցով գնահատվել է ծրագրի ընթացքը, բարձրացվել են խնդիրներ և գտնվել լուծումներ: Թիմի ներսում պարբերական քննարկումների արդյունքում բարելավվել է ծրագրի իրականացումը, իսկ մոնիտորինգի արդյունքները թույլ են տվել հստակեցնել գործողությունները և բարելավել ծառայությունները:

<u>*Գնահատված ոլորտներ՝ ծառայությունների որակը, շահառուներին ցուցաբերված անհատական մոտեցումը, ծրագրով սահմանված գործողությունները՝ ըստ ժամանակացույցի:*</u>

- ✓ ***Ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների պատրաստում***

Յուրաքանչյուր ամսվա հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԱՍՀՆ-ին՝ սահմանված ժամկետներում:

Վերը նշված գործողությունները նպաստել են ծրագրի հիմնական նպատակին՝ ապահովելով երեխաների բարեկեցության, ներառական միջավայրի և սոցիալականացման գործընթացի շարունակական բարելավումը: Շահառուների կյանքի որակի բարձրացմանն ուղղված աշխատանքները շարունակական են լինելու, և հաջորդ եռամսյակում նախատեսվում է ընդլայնել ծառայությունների մատուցման շրջանակը:

***Այսպիսով, վերոնշյալ բոլոր գործողությունները նպաստել են***

- ✓ Շահառուների կյանքի բարելավմանը, ընտանիքում դրական փոփոխություններին
- ✓ Երեխաների մոտ վարքային խնդիրների շակմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը,
- ✓ Համայնքային միջոցառումների կազմակերպման ու իրականացման մեջ ակտիվ ներգրավածությանը
- ✓ Ծնողների հետ արդյունավետ համագործակցության զարգացմանը. դրական ծնողավարության հմտությունների հզորացմանը
- ✓ Շահառուների սոցիալական ինտեգրմանն ու կյանքի դժվարին իրավիճակի մեղմմանը

***Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)***

Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել է ծրագրի մեկնարկի և կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղադրվել է շարունակաբար թարմացվող տեղեկատվություն ԳՈՒՄ ՀԿ-ի ֆեյսբուքյան էջում:
Ստորև նմանատիպ նյութերի հղումներն են՝

- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid02GFhiwcVyAA9o9yi8y4aBjY2iaTPTut8q4LaQkYvuAPTDhbto9araiZxcYMJoWZiWl?locale=ru_RU
- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid0Nid51q3XXGbd9bp4r3KcX5ichtPo2fo6Lfa9Rzpa9NwGzM4kgAvG24YaZm8LV7XZl?locale=ru_RU
- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid02gFavncbbE4Zz88pfKjr5aa46iFBi4QgJSvcwannoNHADxUPhACX7Ebi5RP4c7iVjl?locale=ru_RU
- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid0n2Cxc3eK2LCoUB5KpQa4uEJLewsYxfGmBKVarr1PQz8z8cHjeSpCNhgyhBGGerShl?locale=ru_RU
- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid0377GXC2rSdkuGZ1AtbdmHoKb9iN4vJKMNMQQ55aMvWjmeKc6PzPAGB2jkmAd9JeRLl?locale=ru_RU
- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid02o77NCKqEVUW8FxRjDfJ8mDJhVnKmtM323mmr5q3MoLS9Grxg6MVyVzuGnX9dj2Qgl?locale=ru_RU
- https://www.facebook.com/barekamkentroncfs/posts/pfbid08a1yBkKsuxKUpe9oCTKQsr2MsBtWuULH4kYP6w1EsfL4SMUZTUsEnd6txepaVCDGl?locale=ru_RU

***2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:***

***Քաղած դասեր***

- ***Շահառուների կարիքներին առավել ճշգրիտ արձագանքման կարևորությունը*** – Ծրագրի շրջանակներում իրականացված գնահատումները ցույց են տվել, որ ծառայությունները պետք է ավելի ճկուն լինեն՝ հաշվի առնելով շահառուների անհատական կարիքները:
- ***Մասնագիտական թիմի արդյունավետ համագործակցությունը*** – Թիմային աշխատանքը, պարբերական հանդիպումները և դեպքերի քննարկումները նպաստել են ծառայությունների որակի բարձրացմանը:
- ***Համայնքային ներգրավվածության աճը*** – Համայնքային միջոցառումներին երեխաների ակտիվ մասնակցությունը ցույց է տալիս, որ նման ծրագրերը ոչ միայն նպաստում են երեխաների զարգացմանը, այլև ամրապնդում են համայնքային կապերը:
- ***Ծառայությունների շարունակական մոնիտորինգի անհրաժեշտությունը*** – Անանուն հարցումները և շահառուների հետ անհատական շփումները կարևոր դեր են խաղացել ծառայությունների բարելավման գործում:

***Ծագած դժվարություններ***

- ***Եղանակային պայմանները որպես խոչընդոտ*** – Ձմեռային ամիսներին

եղանակային անբարենպաստ պայմանները դժվարացրել են որոշ միջոցառումների և գործողությունների իրականացումը. համայնքային այցերի ու էքսկուրսիաների իրականացումը տեղափոխվել է հաջորդ եռամսյակ:

- ***Որոշ շահառուների անկանոն ներգրավվածություն*** – Որոշ երեխաներ և ծնողներ պարբերաբար բացակայել են ծրագրային գործունեություններից, ինչը բարդացրել է շարունակական աշխատանքի արդյունավետությունը: Հաջողվել է ձևավորել սահմանված ռեժիմով հաճախումների ապահովման մշակույթ:
- ***Մասնագետների պակաս*** – Գյուղական բնակավայրերում հաճախ չկան բավարար ենթակառուցվածքներ, ինչը բարդացրել է տեղում ծառայությունների տրամադրումը:
- ***Իրավական խոչընդոտներ*** – Որոշ շահառուների մոտ բացակայում են անձնական փաստաթղթերը (կորցրել են կամ այլ պատճառներով չկան):
- ***Համայնքային ներգրավվածության ցածր մակարդակ*** – Գյուղական բնակավայրերում երբեմն ծնողները կամ համայնքի ներկայացուցիչները բավարար տեղեկացված չեն առկա ծառայությունների մասին, ինչի պատճառով երեխաների և ընտանիքների ներգրավումը դանդաղ է ընթանում:
- ***Մշակութային ու ավանդական ընկալումների ազդեցություն*** – Որոշ համայնքներում դեռևս կան կարծրատիպային մոտեցումներ հատուկ կարիքներ ունեցող երեխաների կամ սոցիալապես խոցելի ընտանիքների վերաբերյալ, ինչը խոչընդոտել է երեխաների ինտեգրմանը ծրագրային գործընթացների մեջ:
- ***Ֆինանսական կայունության ապահովման մարտահրավերներ*** – Ծրագրի շրջանակում լայնամասշտաբ միջոցառումներ իրականացնելու, ավելի մեծ թվով շահառուների ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ է նոր ֆինանսավորման աղբյուրների ներգրավում:

***2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):***

Հաջորդ եռամսյակում իրականացվելիք գործողություններն են՝

- ✓ Նոր ընդգրկվող շահառուների կարիքների և կարողությունների գնահատում
- ✓ Շահառուների անհատական զարգացման ծրագրերի կազմում/թարմացում
- ✓ Երեխաների տվյալների մուտքագրում ՄԱՆՈՒԿ տեղեկատվական բազայում
- ✓ Ցերեկային խնամքի ծառայությունների տրամադրում կենտրոնում և արտակենտրոն
- ✓ Կյանքի հմտությունների ամենօրյա պարապմունքների իրականացում
- ✓ Մասնագիտական կողմնորոշման պարապմունքների իրականացում
- ✓ Անձի զարգացման, մեդիագրագիտության և քաղաքացիական կրթության պարապմունքների իրականացում
- ✓ Լոգոպեդական ծառայությունների տրամադրում
- ✓ Հոգեբանական անհատական և խմբային ծառայությունների տրամադրում
- ✓ Արտթերապևտիկ պարապմունքների իրականացում
- ✓ Արտակենտրոն ծառայությունների տրամադրում՝ սոցիալական աշխատանք ընտանիքների հետ, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն, մասնագիտական կողմնորոշման խմբակներ
- ✓ Սոցիալական աշխատանք ընտանիքների հետ, դեպքերի վարում
- ✓ Սոցիալական աշխատանք հատուկ հաստատությունների հետ
- ✓ Դրական ծնողավարման դասընթացների իրականացում
- ✓ Իրավաբանական խորհրդատվության իրականացում
- ✓ Համայնքային միջոցառումների կազմակերպում
- ✓ Ճանաչողական արշավների և էքսկուրսիաների իրականացում
- ✓ Աշխատանքային թիմի կարողությունների զարգացում
- ✓ Շահառուների կողմից ծառայությունների անանուն գնահատում

- ✓ Շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն. նոր գործընկերների ներգրավում
- ✓ Շարունակական մոնիթորինգ և արդյունքների ամփոփում
- ✓ Շահառուների բազայի պատրաստում. ծրագրային և ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

***Կցվում է շահառուների ցուցակը՝ կցորդ 1:***

***2.5 Խնդրում ենք նշել. Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:***

- ***Աշխատանքային թիմի կարողությունների զարգացում***

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի մասնագիտական թիմը պարբերաբար ներգրավվել է մասնագիտական կարողությունների զարգացման տարբեր դասընթացներում: Սա նպատակ ունի մասնագետներին զինել խորը գիտելիքներով, մասնավորապես կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հետ տարվող աշխատանքում: Հաշվետու ժամանակահատվածում մասնագիտական թիմը մասնակցել է ներքոնշյալ վերապատրաստումներին՝

- ***Հոգեբանական աջակցության մեթոդներ*** – հոգեբանները և սոցիալական աշխատողները մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնք նպատակ ունեն զարգացնել խոցելի խմբերի հետ աշխատանքի հմտությունները: Իրականացվել է գործընկեր ՀԿ-ի կողմից:
- ***Մեդիագրագիտություն և թվային հմտություններ*** – հաշվի առնելով թվային գործիքների աճող դերը կրթական և սոցիալական ծրագրերում՝ թիմի անդամները մասնակցել են «Թվային գրագիտության զարգացում» դասընթացների շարքին, որոնք նպաստել են իրենց աշխատանքում թվային գործիքների ավելի արդյունավետ կիրառմանը, ինչպես նաև ստացած գիտելիքների հիման վրա մեդիագրագիտության պարապմունքների իրականացման արդյունավետության բարձրացմանը: Իրականացվել է առցանց, «Տեխնոլոգիական կրթություն» հիմնադրամի կողմից:
- ***Ֆինանսական գրագիտության զարգացում*** - Թիմի անդամները մասնակցել են ֆինանսական գրագիտության դասընթացի, որի նպատակն էր զինել նրանց համապատասխան գիտելիքներով, որպեսզի հետագայում կարողանան աշխատել երեխաների և ծնողների հետ՝ զարգացնելով նրանց ֆինանսական գիտելիքները, բյուջետավորման հմտությունները և պատասխանատու ֆինանսական վարքագիծը: Իրականացվել է առցանց, «Տեխնոլոգիական կրթություն» հիմնադրամի կողմից:

Մարտ ամսվա վերջին կենտրոնի հոգեբանն ու խմբակավարը մասնակցել են փորձի փոխանակման այցի, որը կազմակերպվել է գործընկեր Հայկական Կարիտաս ՀԿ-ի կողմից: Այցի շրջանակում նրանք հնարավորություն են ունեցել այցելելու Արտաշատ և Գյումրի քաղաքներում գործող ցերեկային խնամքի կենտրոններ, տեսնելու նրանց փորձը, հասկանալու գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

- ***Երեխաների իրավունքների իրազեկության վերաբերյալ միջոցառումների իրականացում***

Ծրագրային թիմը նախաձեռնել է երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (ԱՍՀՆ) ստացված հանձնարարականի հիման վրա: Այս նախաձեռնության շրջանակում թիմը նախապատրաստական փուլում մանրամասն ուսումնասիրել է թեման, քննարկել իրականացվելիք քայլերը և մշակել նյութեր, որոնք երեխաների և նրանց ընտանիքների համար կդարձնեն տեղեկատվությունը հասանելի ու կիրառելի:

Հաշվետու եռամսյակում ուշադրությունը կենտրոնացվել է պաստառների պատրաստման վրա, որոնք երեխաների իրավունքները ներկայացնում են ստեղծագործական և տեսողականորեն գրավիչ ձևաչափով: Միջոցառումների ընթացքում երեխաներն իրենք են

ներգրավվել այս գործընթացում՝ արտահայտելով իրենց պատկերացումները սեփական իրավունքների մասին:
Հաջորդ ամիսներին նախատեսվում է իրականացնել թեմային նվիրված ինտերակտիվ դասեր, քննարկումներ, խաղային ուսուցման մոդուլներ, ինչպես նաև համայնքային իրազեկման միջոցառումներ՝ ապահովելով ծնողների և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը: Այս միջոցառումները ոչ միայն բարձրացնելու են երեխաների իրավագիտակցության մակարդակը, այլև կնպաստեն նրանց պաշտպանվածությանն ու հասարակության մեջ իրենց ձայնը բարձրացնելու կարողությանը:

- ***Հանդիպումներ դպրոցների ուսուցիչների, դասվարների և դասղեկների հետ***

Ծրագրի մեկնարկից որոշ ժամանակ անց մասնագիտական թիմը նախաձեռնել է հանդիպումներ Տեղի և գյուղական բնակավայրերի դպրոցների ուսուցիչների, դասվարների և դասղեկների հետ՝ քննարկելու և անդրադառնալու ծրագրի շահառու երեխաների սոցիալական ներառմանն ուղղված քայլերի արդյունավետությունը, նրանց կրթական առաջընթացը, ինչպես նաև առկա դժվարությունները, որոնք կարող են ազդել սովորելու գործընթացի վրա: Ուսուցիչների հետ երկխոսությունը կարևոր նշանակություն է ունեցել՝ բացահայտելու, թե ինչ հավելյալ աջակցության կարիք ունեն երեխաները, ինչպես կարելի է առավել արդյունավետորեն կազմակերպել համագործակցությունը, և որոնք են հիմնական ուղղությունները, որոնց վրա պետք է կենտրոնանալ առաջիկայում:
Այս փոխգործակցությունը ոչ միայն հնարավորություն է տվել հասկանալու ծրագրի ազդեցությունը դպրոցում երեխաների վարքի, սովորելու մոտիվացիայի և առաջադիմության վրա, այլև ստեղծել է համագործակցային հիմք՝ դպրոցի կողմից ապահովելու աջակցության կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների բացահայտման և նրանց հետ համատեղ աշխատանքի ուղղությամբ:

- ***Անդամություն Տեղի համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ին***

Ծրագրի համակարգողն անդամակցել է Տեղ համայնքի ղեկավարին կից «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ին: Հաշվետու ժամանակահատվածում նա ակտիվ մասնակցություն է ունեցել հրավիրված նիստերին, ներկայացրել ծրագրում ներգրավված շահառու ընտանիքների խնդիրները, իրականացրել ծահերի պաշտպանությունը: Սույն խորհուրդին անդամակցումը արդյունավետ է ծրագրի շրջանակում համայնքապետարանի հետ ամուր համագործակցության շարունակության, ընտանիքների սոցիալական դեպքերի վարման համատեղ քայլերի իրականացման համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ա. [illegible]

------- Կնքման վայրը Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակության և կրթության աջակցող ՀԿ
Գործադիր տնօրեն՝ Արտաշես Տորոսյան

Կնքման վայրը Կ.Տ.